ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Թամարա Երվանդի Պողոսյանս, ծնվել եմ 01.01.1955 թվականին, նախկին Ադրբեջանական ԽՍՀՄ-ի Շամխորի շրջանի Բարսում գյուղում, մանկավարժների ընտանիքում:

1972թ-ին ավարտել եմ Բարսում գյուղի հայկական միջնակարգ դպրոցը:

1975թ-ին ընդունվել եմ Երևանի Պետական Համալսարանի Իրավաբանական ֆակուլտետի ցերեկային (առկա) բաժինը, որն ավարտել եմ 1980թ-ին և անմիջապես գործուղվել աշխատանքի նախկին ՀՍՍՀ Պետկոմգյուղտեխնիկա ու նշանակվել Էջմիածնի շրջգյուղտեխնիկայի իրավախորհրդատու, հետագայում՝ առաջին կատեգորիայի իրավախորհրդատու:

1980թ-ին դիմել եմ ՀՀ Փաստաբանների կոլեգիա՝ ռեզերվում ընդգրկվելու համար:

1996թ-ին քննություններից դրական գնահատականներ ստանալուց հետ ընդունվել եմ Փաստաբանների կոլեգիայի անդամ և 18.09.1996թ-ին թիվ 55 հրամանով նշանակվել փաստաբանական աշխատանքի ՀՀ Մեղրու տարածաշրջանի իրավաբանական կոնսուլտացիայում, որպես վարիչ-փաստաբան:

15.05.2000թ-ին թիվ 31 հրամանով նշանակվել եմ փաստաբանական աշխատանքի Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների փաստաբանական գրասենյակում:

Առայսօր հանդիսանում եմ ՀՀ փաստաբանների պալատի անդամ (արտոնագիր թիվ 273):

Ի սկզբանե գտնվում եմ հարկային դաշտում:

Արտոնագրիս ժամկետը չի կասեցվել և չի դադարեցվել:

2021թ-ի հունվարի դրությամբ կարգապահական տույժերի չեմ ենթարկվել: Ստացել եմ պատվոգիր ակտիվ աշխատանքային գործունեության համար:

Իրավաբանական գործունեության հետ կապված անցել եմ մի շարք որակավորման դասընթացներ:

Հիշյալ ժամանակահատվածներում իրավաբանական-փաստաբանական գործունեություններին զուգահեռ աշխատել եմ նաև Վաղարշապատ քաղաքի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջում, որպես իրավաբան, ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի (այժմ՝ Խորոնք) և ՀՀ Գեղարքունիքի մարզի Չայքենդ (այժմ՝ Դպրաբակ) գյուղերի միջնակարգ դպրոցներում, որպես իրավունքի և պատմության առարկաների ուսուցչուհի:

Դպրոցական տարիներին, և հետագայում ևս, հանդիսացել եմ «Շամխոր» շրջանային հայկական թերթի արտահաստիքային թղթակից:

Ուսանողության տարիներին մասնակցել եմ բուհում անցկացված առարկայական (հիմնականում՝ քրեական իրավունքի) օլիմպիադաներին, ստացել դիպլոմ-մրցանակներ:

Քաղաքականությամբ չեմ զբաղվում:

Որևէ կուսակցության անդամ չեմ, տարիքային կենսաթոշակառու եմ, տիրապետում եմ միայն հայերեն և ռուսերեն լեզուներին:

Ունեմ մեկ զավակ:

Բնակվում եմ (հաշվառմամբ՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Չարենց փողոցի թիվ 9/ 69 հասցեում):

Հեռախոսահամար՝ 093-62-80-68:

Փաստաբան՝ Թ. Ե. Պողոսյան